# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.11.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/90**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կողմից 25.10.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/90 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

**1. «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Ույուտ Սենթր» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 25.10.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի կարիքների համար Սպիտակ համայնքի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի արդիականացման և նոր համակարգերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթին (այսուհետ՝ Ընթացակարգ) 09.10.2018թ. հաղթող է ճանաչվել «Վահրադյան Շին» և «Ույուտ Սենթր»

ՍՊԸ-ի կոնսորցիումը (այսուհետ՝ Կոնսորցիում): Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.10.2018թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ Կոնսորցիումի հայտը մերժվել է և «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի տվյալները ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով՝ պատճառաբանելով որ համաձայն 10.10.2018թ. գնահատող հանձնաժողովի կատարած հարցմանն ի պատասխան «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրված եզրակացության 09.10.2018թ. դրությամբ Ընկերությունն ունի ժամկետանց հարկային պարտավորություն 209 000 ՀՀ դրամի չափով: Ընկերությունը մինչև Ընթացակարգին հայտ ներկայացնելը դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 11-րդ բաժին հարկային պարտավորությունների վերաբերյալ Ընկերությանը տեղեկանք տրամադրելու համար՝ հարկային պարտավորությունների չափը Ընթացակարգին մասնակցելու հայտ ներկայացնելու օրվա դրությամբ գնումների մասնակցելու օրենքով սահմանված հարկային պարտավորությունների թույլատրելի սահմանները չգերազանցելու փաստի մեջ համոզվելու համար:

ՀՀ ԿԱ ԿԵՊ ՀՎՍՎ թիվ 11 բաժնի կողմից 08.10.2018թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը որևէ հարկային պարտավորություն չունի: Ելնելով վերոգրյալից Ընկերության համար անհասկանալի է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը, կամ թե ինչպիսի տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.10.2018թ. հարցմանը, ըստ որի «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ն 09.10.2018թ. դրությամբ ունեցել է 209 000 ՀՀ դրամ հարկային պարտավորություններ: «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մրցույթը հաղթող անձի հարկային պարտավորությունները չպետք է գերազանցեն գնման առարկայի գնի 1 տոկոսը, բայց ոչ ավելի քան 50 000 ՀՀ դրամը: «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կողմից մինչև բողոքը ներկայացնելը բանավոր հարցվել է, թե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և թե ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 11 բաժնի նշված թյուրիմացությունը պարզելու նպատակով: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը պատասխանել է, որ իր հարցումը հարկային մարմնից «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների վերաբերյալ ճիշտ է, իսկ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍՎ թիվ 11 բաժնից

պատասխանել են, որ հանձնաժողովի հարցման ամսաթիվ նշվել է ոչ թե 09.10.2018թ., այլ 10.09.2018թ. դրությամբ:

Վերը նշված բոլոր փաստարկների համադրմամբ պարզ երևում է, որ «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի նկատմամբ՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումն անհիմն է կամ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հանձնաժողովին ներկայացված տվյալները Ընկերության հարկային պարտավորությունների վերաբերյալ ստույգ չեն:

Ընկերությունը բողոքով խնդրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կայացնել ճիշտ որոշում:

Միևնույն ժամանակ Ընկերությունը 30.10.2018թ. ի լրումն բողոքի ներկայացված գրությամբ հստակեցրել է պահանջը և խնդրել՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթը չկայացած հայտարարելու մասին որոշումը:
2. Պարտավորեցնել «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին մերժել «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.10.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

**<u>2. ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանը, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 26.10.2018թ. թիվ 034/27-1123 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքը իր կարիքների համար հայտարարել է «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթ, որին 09.10.2018թ. հայտ է ներկայացրել «Վահրադյան Շին» և «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կոնսորցիումը: Գնահատող հանձնաժողովի

09.10.2018թ. թիվ 3 նիստի արդյունքներով Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Վահրադյան Շին» և «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կոնսորցիումը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացրել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ: Սահմանված ժամկետում կատարված հարցման վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է տեղեկատվություն, ըստ որի «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 209 000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ղեկավարվելով Կարգի 44-րդ կետի պահանջներով, գնահատող հանձնաժողովը 18.10.2018թ. կայացած նիստի արդյունքում որոշում է կայացրել Կոնսորցիումի հայտը մերժելու վերաբերյալ, իսկ «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի տվյալները ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

«Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կողմից 25.10.2018թ. բողոք է ներկայացվել, որի մեջ նշվել է, որ Ընկերությունը 08.10.2018թ. դրությամբ հարկային պարտավորություն չունի: Բողոքի մեջ նաև նշվել է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀՎՍՀ 11-րդ բաժնի կողմից «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ին հայտնել են, որ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարված հարցման մեջ հայտը ներկայացնելու օրը նշվել է ոչ թե 09.10.2018թ., այլ՝ 10.09.2018թ., ինչից ելնելով էլ Ընկերությունը կարծում է, որ գնահատող հանձնաժողովի 18.10.2018թ. կայացրած որոշումն անհիմն է:

Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ ՊԵԿ ՀՎՍՀ թիվ 11-րդ բաժնի կողմից «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ին տրամադրված տեղեկատվությունը սխալ է և գնահատող հանձնաժողովի

քարտուղարը ՀՀ ԿԱ ՊԵԿ կատարած հարցման մեջ ճիշտ է նշել ընկերությունների հայտը ներկայացնելու ժամկետը:

Վերոգրյալով պայմանավորված Սպիտակի համայնքապետարանը կարծում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.10.2018թ. ճիշտ որոշում է կայացրել և որևիցե ձևով չի խախտել «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի որևէ կետ, ուստի «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի պահանջն անհիմն է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 30.10.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. ԳԲԽ-ԱՄ-2018/90 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ԳԲԽ-ԱՄ-2018/90 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի կողմից ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքի կարիքների համար Սպիտակ համայնքի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի արդիականացման և նոր համակարգերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով 09.10.2018թ. հայտ է ներկայացրել «Ույուտ Սենթր» և «Վահրադյան Շին» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 16.10.2018թ. տրամադրված

եզրակացության համաձայն՝ «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 209 000 ՀՀ դրամի չափով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.10.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ույուտ Սենթր» և «Վահրադյան Շին» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժվել է:

5. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 13.11.2018թ. թիվ 1/6-1/70110-18 գրությամբ հայտնել է, որ «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ն 09.10.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

**4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի 25.10.2018թ. բողոքը, ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքապետարանի 26.10.2018թ. թիվ 034/27-1123 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 30.10.2018թ. թիվ 1/6-1/65985-18 և 13.11.2018թ. թիվ 1/6-1/70110-18 գրությունները, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված

ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ ***հայտը ներկայացնելու օրվա դրությամբ*** հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց

պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի կողմից ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքի կարիքների համար Սպիտակ համայնքի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի արդիականացման և նոր համակարգերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով 09.10.2018թ. հայտ է ներկայացրել «Ույուտ Սենթր» և «Վահրադյան Շին» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

«Ույուտ Սենթր» և «Վահրադյան Շին» ՍՊ ընկերությունները Ընթացակարգի հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել են, որ բավարարում են «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.10.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Կոնսորցիումը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8-րդ կետի 8.13-րդ ենթակետի 3-րդ պարբերությամբ նախատեսվել է, որ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցումն ուղարկվում է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան:

Ընթացակարգի հրավերի 7-րդ հավելվածով նախատեսվել է Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացվող հարցման հետևյալ օրինակելի ձևը.

| N | Մասնակցի | | |
|---|---|---|---|
| | անվանումը | հարկ վճարողի հաշվառման համարը | հայտը ներկայացվելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը |
| | | | |
| | | | |

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը, 10.10.2018թ. Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով «Ույուտ Սենթր» և «Վահրադյան Շին» ՍՊ ընկերությունների վերաբերյալ հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, հարցման՝ ***«հայտը ներկայացվելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը» դաշտում նշելով «09.10.2018թ.» ամսաթիվը:***

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 16.10.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ույուտ Սենթր» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 209 000 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.10.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ույուտ Սենթր» և «Վահրադյան Շին» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժվել է:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի՝ Ընկերությանն ուղղված 30.10.2018թ. թիվ 1/6-1/65985-18 գրությունը, որի համաձայն ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքի կարիքների համար հայտարարված «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի հարցման մեջ ***հայտը ներկայացնելու ամիսը, ամսաթիվը և տարեթիվը դաշտում նշվել է***

***09.10.2018 թվականը, որը 2018 թվականի սեպտեմբերի 10-ն է, և բնականաբար հարկ վճարողի ժամկետանց հարկային պարտավորություններն արձանագրվել են այդ օրվա դրությամբ, իսկ այդ օրվա դրությամբ Ընկերությունն ունեցել է 209 000 ՀՀ դրամ պարտավորություն:***

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 31.10.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/19781-18 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ կատարված հարցման մեջ որն է նշվել «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացնելու ամսաթիվը, և արդյոք «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ն 09.10.2018թ. դրությամբ ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե ոչ և եթե այո, ապա ինչ հարկատեսակի գծով:

Ի պատասխան ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 13.11.2018թ. թիվ 1/6-1/70110-18 գրությամբ ևս մեկ անգամ հայտնել է, որ Ընթացակարգի հարցման մեջ «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի ամիսը, ամսաթիվ և տարեթիվը դաշտում նշվել է 09.10.2018 թվականը, որը 2018 թվականի սեպտեմբերի 10-ն է: Նույն գրությամբ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը հայտնել է, որ ***<u>Ընկերությունը 2018 թվականի սեպտեմբերի 10-ի դրությամբ դրոշմանիշային վճարի գծով ունեցել է 209 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, իսկ 2018 թվականի հոկտեմբերի 9-ի դրությամբ Ընկերությունը ժամկետանց հարկային պարտավորությունների չունի:</u>***

Այսպիսով՝ «Ույուտ Սենթր» և «Վահրադյան Շին» ՍՊ ընկերությունները «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել 2018 թվականի հոկտեմբերի 9-ին (09.10.2018թ.): Միևնույն ժամանակ «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե կատարված հարցման մեջ Ընկերության «հայտը ներկայացվելու ամիսը, ամսաթիվը, տարեթիվը» դաշտում նշվել է «09.10.2018թ.»: ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ եզրակացությունը տրամադրվել է 2018 թվականի

սեպտեմբերի 10-ի դրությամբ (10.09.2018թ.) և արձանագրվել է ժամկետանց պարտավորություն 209 000 ՀՀ դրամի չափով, մինչդեռ Ընկերության կողմից հայտը ներկայացվել է 2018 թվականի հոկտեմբերի 9-ին: Դրա հետ մեկտեղ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 13.11.2018թ. թիվ 1/6-1/70110-18 գրությամբ հայտնել է, որ «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ն 2018 թվականի հոկտեմբերի 9-ի դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ: Հետևաբար արձանագրում եմ, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, քանի որ Ընկերությունը «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացնելու օրվա դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի կողմից 25.10.2018թ. ներկայացված բողոքը բավարարել.

1. Պարտավորեցնել «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱՇՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթը չկայացած հայտարարելու մասին որոշումը.

2. Պարտավորեցնել «ՀՀ ԼՄՍՀ-ԲՄԱԾՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Ույուտ Սենթր» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ